



Հարգելի ծնող/խնամակալ ,

Մենք ուրախ ենք, որ դուք և ձեր ընտանիքը հանդիսանում եք մեր բազմազան համայնքի անդամներ, որոնք խոսում են ավելի քան հարյուր տարբեր լեզուներով: Prince William County-ի հանրակրթական դպրոցը ստանձնում է պարտավորություն՝ տալ ույն ուրաքանչյուր ուսանողի *համաշխարհային մակարդակի կրթություն*: Քանի որ ընտանեկան գործընկերությունը անչափ կարևոր է այդ գործընթացում, ուրախ ենք ձեզ առաջարկել ու որոշ հիմնական տեղեկություններ՝ օգնել ույն ուրաքանչյուր ծնողի և խնամակալի հասկանալ և մասնակցել իրենց երեխայի կրթության գործին:

Բոլոր դպրոցական նյութերը տրամադրվում են անգլերեն լեզվով, սակայն մենք շարունակաբար թարգմանում ենք առանցքային փաստաթղթերը և տեղեկություններ մեր տարածքում առավելագույնս պահանջված լեզուներով:

Լեզուների մեծամասնության կրողները կարող են օգտվել Prince William County-ի հանրակրթական դպրոցի ինտերնետային կայքում՝ pwcs.edu և առանձին դպրոցական կայքերում պարունակվող կարևոր և պարբերաբար թարմացվող տեղեկատվությունից: Դրանք բոլորը պարունակում են հայտնի Google Թարգմանիչ գործիքը, որն առաջարկում է որոշակի թարգմանություն 50-ից ավելի լեզուներով: Համակարգչային թարգմանությունները հաճախ թերի են լինում, սակայն, այնուամենայնիվ, տրամադրում են դպրոցների վերաբերյալ տեղեկատվության կարևոր հղումներ: Եթե դուք տանը չունեք համակարգչից օգտվելու հնարավորություն, կարող եք օգտվել դրանից որևէ հանրային գրադարանում:

DR. STEVEN L. WALTS
Superintendent of Schools

Կարևորն այն է, որ Ղարոցական բաժինը ապահովում է արհեստավարժ բանավոր թարգմանիչներին հասանելիություն՝ օգնելով գրեթե բոլոր լեզվակիրներին հասկանալ այն փաստաթղթերը, որոնք պարունակում են էական տեղեկություն նուսանողի և ծնողի իրավունքների, պարտավորությունների, ակնկալիքների և ղարոցական ուսուցման, ինչպես նաև ուսանողներին տրվող նպաստների և ծառայությունների վերաբերյալ: Թարգմանիչները կարող են օգնել այս հարցերի շուրջ կազմակերպվող ծնողական ժողովների ընթացքում՝ երաշխավորելով յուրաքանչյուրի ներդրման փոխանցումն ու ընկալումը: Այս ծառայություններն ընտանիքներին մատուցվում են անվճար:

Կիրառեք այս մեթոդները յուրաքանչյուրը՝ ստանալու անհրաժեշտ օգնությունը՝

- Առցանց՝ այցելեք translations.pwcs.edu կայքը:
- Անձամբ՝ այցելեք ձեր երեխայի ղարոցը: Հավանականությունը քիչ է, որ ձեր լեզվին տիրապետող անձը հասանելի կլինի: Այնուամենայնիվ, աշխատակիցը կօգտագործի պաստառ ձեզ օգնելու համար:

Ամեն դեպքում, դուք պետք է տրամադրեք հետևյալ տեղեկատվությունը՝

- Ձեր և ձեր երեխայի անունները,
- Ձեր երեխայի ղարոցը, դասարանը և ուսուցչի անունը,
- Տեղեկատվություն այն անձի մասին (անունը կամ պաշտոնը), ում հետոցանկանում եք զրուցել, ինչպես նաև քննարկման առարկան, և
- Հեռախոսահամարն ու ձեր հասանելիության ժամերը:

Եթե ձեր երեխան ղարոցից տուն է բերում հաղորդագրություն, որում պահանջվում է հանդիպում, կամ եթե դուք ցանկանում եք կազմակերպել քննարկում ուսուցչի կամ ղարոցի այլ պաշտոնյայի հետ, կիրառեք վերոնշյալ միջոցները թարգմանիչ պահանջելու համար, ով կօգնի ձեզ այդ կարևոր զրույցի հարցում: Հնարավորինս սեղմ ժամկետում ձեզ կպատասխանեն:

Ձեր ներգրավվածությունը կարող է դրական փոփոխություն մտցնել ձեր երեխայի կրթության գործում, և մենք ցանկանում ենք ձեզ օգնել՝ մատչելի դարձնելով այս ծառայությունները ձեզ համար: Մենք հույս ունենք, որ այս անակնկալ հստակորեն փոխանցում է Prince William County

հանրակրթական դպրոցի ստանձնած պարտավորությունը Ձեր երեխայի և Ձեր նկատմամբ: Ես վստահ եմ, որ դուք կհստակեցնեք մեր ցանկությունը, որ յուրաքանչյուր ուսանող ստանա համաշխարհային մակարդակի կրթություն:

Անկեղծորեն,



Steven Walts

Դպրոցների կառավարիչ

*pwcs.edu կայքն այցելելիս, փնտրեք գունավոր գլոբուսը՝ տեղակայելու այս հաղորդագրություն մեջ նկարագրված տեղեկություն պարունակող էջերը:

